Եվրոպական պատգամինստը կամ Եվրոպակամենտը ԵՄ-ի ուղղակիորեն ընտրվող պատգամինստական հաստատությունն է: Նա կազմված է 736 պատգամինի անդամներից, որոնց ընտրական օանօվկածը՝ Եվրոպատը, 2009 թ. տվյալներով կազմվել է 375 մլն: Նա հիմնվել է 1979 թ. և ընտրվում է յուրաքանչյուր հինգ տարին մեկը: Նա Եվրոխորհրդի հետ հավասարապես կիսում է իշխանությունը՝ օրենսդիր և բյուջեադիմ հարցերում: ԵՄ-ի գործադիր մարմնին համարվող Եվրոպական Հանձնաժողովը հաշվինու և Եվրոպակամենտի առջև, վերջինս օգտագու է վետոյի իրավունքից և կարող է ատիպի, որ Հանձնաժողովը և երա Պրեզիդենտը հրաժարական տան:

Եվրոպակամենտի անդամ են 27 պետություն:

Եվրոպակամենտն առաջին անգամ Հայոց ցեղասպանությունը ճանաչել է 1987 թ. հունիսի 18-ին<sup>200</sup>: «Հրանից հետո նա ևս երեք անգամ՝ 2000, 2002 և 2005 թթ., անդադարձել է այդ հարցին և ընդունել համապատասխան բանաձևերը<sup>201</sup>:

Այնու բուք բանաձևի մասին,

«Եվրոպական Պատգամինստ

Բանաձև Հայկական հարցի բարերական լուծման վերաբերյալ  
Փաստաթուղթ A2-33/87»

Դրան հաջորդում է Բանաձևի կոնստատացիոն մասը, որտեղ մասնավորապես ասվում է: «Հայվի առնելով այն հանգամանքը, որ Հայկա-

200 European Parliament Resolution,

[http://www.armenian-genocide.org/Affirmation\\_152/current-category/7/affirmation\\_d...](http://www.armenian-genocide.org/Affirmation_152/current-category/7/affirmation_d...)

201 N. Hovhannissyan, The Armenian Genocide. Armenoide-The Most Genocidal Genocide. In Ten Languages of the World, p. 572.

կան կողմը իրադարձությունները գնահատում է որպես ցեղասպանություն ՄԱԿ-ի 1948 թ. Կուսվնծցիայի խևաստով», «Թուրքական պետությունը ժխտում է ցեղասպանության համար պատասխանառությունը որպես անհիմն», «Թուրքական կառավարությունը շարունակելով ժխտել 1915 թ. ցեղասպանությունը, զբկում է հայ ժողովրդին իր սեփական պատմության իրավունքից», «Պատմականորեն ապացուցված Հայոց ցեղասպանությունը չի եղել ոչ բարարական դատավարության օրինակ և ոչ էլ փոխառուցում է տրվել», «Հայկական ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի կողմից կոչումից որպես ռեարդիտացիայի մարդկային ակտ հանդեպ հայերը, ինչը կարող է միայն պատիվ քրել քորրական կառավարությանը», որին արդին հետևում են Բանաձևի այն հոդվածները, որոնցում շարադրված են Եվրոպականինությունը և պահանջները:

#### Եվրոպականինությունը.

\*1. Հավասում է, որ Օսմանյան կայրության տարածքում թնամկող հայերի ներգրավումը 1915–1917 թթ. ողբերգական իրադարձությունների մեջ հանդիսանում է ցեղասպանություն՝ ցեղասպանությունը կամ կերպությունը պատճենում Միավորված ազգերի 1948 թ. Դեկտեմբերի 9-ին ընդունված Կուսվնծցիայի խմանումը։ Ըստունում է, որ ներկա Թուրքիան չի կարող պատասխանառություններ այս ողբերգության համար, որին ներարկվել են հայերը Օսմանյան կայրությունում և շնորհում, որ այսօրվա Թուրքիային ոչ բարարական, ոչ իրավական կոմ նյութական պահանջներ չեն կարող ներկայացվել՝ ենթադր այս պատմական իրողությունը որպես ցեղասպանություն ճանաչելու ակտից»<sup>202</sup>:

Բանաձևը միաժամանակ կոչ է անում բորբական կառավարության հավաստարին մերա 1923 թ. Լոգանի պայմանագրի 37–45 հոդվածներին, որոնք վերաբերում են Թուրքիայի ոչ մասունակ փորբանասնությունների պաշտամությանը, գտնում է, որ Թուրքիայում հայերական եկեղեցական հուշարձանների պահպանումը պեսը է դիտարկել քորոք բարարակրթությունների մշակութային ժառանգությունը պահպանելու համատեքստում<sup>203</sup>: «Երջապես՝ Բանաձևը կոչ է անում «իմայնունի բանակցությունները հայ և քորք ժողովուրդների միջև»<sup>204</sup>.

Այս Բանաձևի կարևորությունը ոչ միայն այն է, որ ընդունված է ժամանակակից աշխարհի մի այլային հեղինակավոր կազմակերպության

202 [http://www.armenian-genocide.org/Affirmation\\_152/current\\_category\\_7/affirmation\\_d...](http://www.armenian-genocide.org/Affirmation_152/current_category_7/affirmation_d...)

203 Նույն տեղում։

204 Նույն տեղում։

կողմից, որպիսին Եվրոպական պատրաստելուն է՝ Եվրոպական առաջատար և զարգացած 27 պետությունները միավորող Եվրոպական միության օրենսդիր մարմինը, այն այն, որ նրանում շատ հստակ է սահմանված, որ հայերի հետ 1915–1917 թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները միայն և միայն ցեղասպանություն պեսոք է համարել և ընդունել այսպես, ինչպես որ սահմանված է ՄԱԿ-ի 1948 թ. Կոնվենցիայով: Այսինքն՝ նա այլ թեուրիթ մեկնաբանությունների տեղի չի տայիս: Այսու կարևոր հանգամանքը կայսերում է նրանում, որ ԵՄ Պատրաստելուց մահացու հարիսած է հասցեում բոլոր նրանց, ովքեր փորձում են ժխտել Եվրոպականության կանոնան և նրա հանցագործությունը պատճեն ՄԱԿ-ի 1948 թ. Կոնվենցիայի դրույթների կիրառելիությունը Հայոց ցեղասպանության համար: Ան թեզը, թե այդ դրույթները հետադարձ ուն չունեն, հօդ ցնեց: Ել չենք խոսում այն մասին, որ Բանաձեզ պահածող է ժամանակակից թուրքիայի կառավագությունից ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

#### V. Եվրոպայի խորհուրդ (Եվրոխորհուրդ, Council of Europe). 2001:

Եվրոխորհուրդը հիմնվել է դեռևս 1949 թ., իսկ այնուհետև ներառվելի համապատասխան մոդելիկացիայի: Նա Եվրոպական ինտերացման ուղղությամբ գործող ամենահին կազմակերպությունն է և իր գործունեության մեջ շեշտոք դնում է իրավական, մարդու իրավունքների, ժողովրդավարական զարգացման, օրենքի կառավարման՝ տիրապեսության, և մշակութային փոխհամագործակցության հարցերի վրա: Խորհրդի անդամ ներ ներառական 47 պետություն, որոնք ներկայացնում են Եվրոպայի 800 միլ. բարարացիների<sup>205</sup>:

Հայաստանի Հանրապետությունը անդամ է 2001 թ.<sup>206</sup>:

Նրա կարևոր մարմինները և կառուցման են՝ Նախարարների խորհուրդը, որը կազմվում է անդամ ներկաների արտաքին գործերի նախարարներից, Պահպամնութական առամբերներ՝ կազմված անդամ յուրաքանչյուր պետության պատղամենութ անդամներից, և Գլխավոր քարտուղարը, որը զիսավորում է Եվրոխորհրդի քարտուղարությունը:

Եվրոխորհրդի ասամբլեան 2001 թ. մայիսի 14-ին հասուն անդարձարձնել է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցին: Դա շատ

205 Council of Europe, [http://en.wikipedia.org/wiki/Council\\_Europe](http://en.wikipedia.org/wiki/Council_Europe).

206 Լույս տեղում:

կարևոր, հարցի բոլոր ասպեկտներն ընդգրած պաշտոնական փաստաթուղթ է, որը ներակայացնում ենք ստորև.

#### «Պարզութեալուսկան առաջընթաց»

Физикалық 9056

14 Մայիսի, 2001 թ.

#### Տարբերակային համապատասխանություն

ສາທາລະນະລັດ ປະຊາທິປະໄຕ ປະຊາຊົນລາວ

Այսօր հիշելով XX դարի առաջին ցեղասպանությունը՝ Հայոց ցեղասպանությունը, և առմանին մաստօգենով գոհերի հիշատակին:

Դատավարութեալ ցեղասպանության հանցագործության դրսությունը որպես հանցագործություն ընդունել մարդկության:

Գտնելով, որ ցեղասպանության գործողությունների տևականացմանը ամփոփակած միջոց է օգնելու հանդիսական նոր նորման:

Նկատի առնելով այս փաստը, որ տարրեր եւլուսական համապարբերութեաններ, Եվրոպուրիոյի ամեղամ մի շարք երկրների պարագևներ ընդունել են բանաձեռք և հայուսարություններ ճանաչվուի Հայոց ժողովապահությունը, իսկ Ֆրանսիայի Ազգային Ժողովի պարագայում՝ որինք:

Գովնակու, որ միշագցային համբուրյան կողմից Հայոց ցեղասպանության ճամաչումը եռապէս կօգնի թուրքական իշխանություններին ընդունելու համանման որոշում, և որպան արդյունք կիսանօցնի Հայաստան-Շոտրիի հարաբերությունների բարեկամանը, և այդպիսով նեղորում կդիմի տարածաշրջանային խաղաղության, անվտանգության և կառունության հարցում:

Առաջին ներքուստորագրայի ամրամնեց, կոչ էլ անում Եվրոպայի “Պաղամետուստական առաջինայի բոլոր անդամներին ձևոր անհրաժեշտ քայլերը ճանաչելու Հարց ցեղասպանությունը՝ կիրառված Օսմանյան կայսրությունում հակերի դեմ XX դարի սկզբին”<sup>20</sup>:

Սոլորազբե և Անդրադայի, Ռուբախիսայի, Մրտվակիսայի, Դամիսայի, Աղբաժանայի, Խոտայի, Ռուսաստանի, Վրաստանի, Պորտուգալիայի, Կիպրոսի, Միացյալ Թագավորության, Հռոմանատանի, Խաղաղօվկիանոսի, Պերսականայի, Շվեյցարիայի, Մոլդովայի, Մակեդոնիայի, Լիխանականի, Հրամանաժամկետայի, Խորվաթիայի, Խորվաթիայի, Բնակչայի, Կուբանը և այլ պետքածակները<sup>28</sup>: Սոլորազբե և 28 պետքածակների ներկայացուցիչներ:

207 Recognition of the Armenian Genocide. Parliamentary Assembly.

[http://assembly.com.lnk?DocumentsWorking\\_Docs/Doc01/EDOC5066.htm](http://assembly.com.lnk?DocumentsWorking_Docs/Doc01/EDOC5066.htm)

208 *Lemniscomys*

Ստորագրողների մեջ, թևականացար, բացակայում են Թուրքիայի և Ադրբեյչանի ստորագրությունները։ Չկա նաև Վրաստանի ենթայացուցյալ ստորագրությունը։

Եվրոխորհրդի փաստաթուրը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ կարծիք է համարել հիմնարար փաստաթուրը, բայց որ երանում ներառված են խնդրի բոլոր ասպեկտները, այդ թվում այնպիսինները, որոնց շուրջ գոյություն ունեն անհամաձայնություններ և տարականություններ։ Փաստաթուրը կազմված է յատ հատակ, նրա ձևակերպությունների երկիմաստ չեն, նրանում ընդգծված և ճիշտ են մեկնաբանման այն բոլոր մռանցումները, որոնց հոգը են հայերին։ Օսմանյան կայսրությունում 1915 թ. իրագործվել է հայերի ցեղասպանություն, Հայոց ցեղասպանությանը ՀՀ դարի առաջին ցեղասպանությունն է, նա դիտվում է հանցանդորություն ընդդեմ մարդկության և կոչ է անում Եվրախորհրդի 47 անդամ պետություններին, այդ թվում և Թուրքիային։ Ադրբեյչանին ու Վրաստանին, ընդունել և ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ինչը լորք ներդրում կարող է հանդիսանալ կանխեցու նոր ցեղասպանությունները։

## VI. Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիա (International Association of Genocide Scholars), 1997, 2007:

Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան հիմնվել է 1994 թ.։ Դա միջամտագիտար, գլոբալ, ոչ կուսակցական, անկողմնական կազմակերպություն է, որի առաջին պրեզիդենտը եղել է միջազգային մեծ ճանաչում ունեցող ամերիկյան ցեղասպանացիություն պրոֆեսոր Հելեն Ֆալմը։ Նա միավորում է աշխարհի բոլոր ականավոր ցեղասպանացիուններին, ցեղասպանության հարցների շուրջ համագործակցություն հաստատում գիտնականների, մասնավորականների, ցեղասպանությունը վերապրուների, իրավաբանների, գրողների, լրագրողների, արվեստագետների, քաղաքական և հասարակական գործիչների և բոլոր այլ մարդկանց ու մասնագիտների միջև, որոնք կարող են օգնակար լինել ցեղասպանության հիմնախնդիրների միջամտագիտացիությունը ուսումնահիմքության թևագույնությունը։ Ասոցիացիան իր կարևոր խնդիրներից մեկը համարում է ցեղասպանությունների պատճառների ու բնույթի բացահայտումը, իրագործման մեխանիզմները, մերժումների և հետևաներների ուսումնասիրությունը, ցեղասպանությունը կանխեցու նրա մեղավորներին պատճեցու հարցերը և այլն։

Արդեն եշվել է, որ Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի ռատումնախորհրդական դաշտում մշտական, այլ ցեղասպանությունների կողքին, գտնվում է նաև Հայոց ցեղասպանությունը կամ Արմենցիւ-Հայասպանությունը: Սոյն աշխատությունն տարբեր էջնորում բավականին անդրադարձել ենք Ասոցիացիայի գործունեության լուսաբանությանը՝ կապված Հայոց ցեղասպանության ճանաչման և Թուրքիայի՝ որպես այդ ցեղասպանության զիսավոր հանցագործի պատճեն հարցերին: «արծում ենք, որ կարիք ձևակին անդրադարձալու այդ հարցերին և ամենորդ անգամ ծանրապեսներու ընթացողի ուշադրությունը: Միայն նշենք, որ Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան առաջին անգամ օնմանը ջարդերը միաձայն ճանաչել է որպես Հայոց ցեղասպանություն 1997 թ. հունիսի 11-13-ը Մոլիճալում (Կանաչա) կայացած կոնֆերանսում: Նա միաձայն ընթառնել է բանաձև, որում արձանագրված է. «Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի այս կոնֆերանսը, որը գումարվել է Մոլիճալում 1977 թ. հունիսի 11-13-ը, վերահաստուածում է, որ Թուրքիայում մեկ միջունից անինի հայերի զանգվածային կոստորածները ցեղասպանություն են, որը հասաւուած է Միամորված ազգերի» Ցեղասպանությունը կանխելու և պատճենու կոնվենցիան: Նա դատապարտում է բորբական կառավարության կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը, երա պաշտոնական և ոչ պաշտոնական գործակալներին և աշակեցներին»<sup>209</sup>:

Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան 2005 թ. հունիսին իր հեղորական կոնֆերանսում, որը կապացակ Ֆրիդլայուն, թնարկեց «Ինչեւում տարի Հայոց ցեղասպանությունից հետո, վարսոն տարի Հորբեատից հետո» հարցը: Առաջին անգամ որևէ միջազգային ասոցիացիոնական թե ոչ գիտական, նաև հարց էր թնարկելու: Ար կոնֆերանսում մեկ անգամ և հաստատվեց 1915 թ. օնմանը կայսրությունու հայերի հետ կապված որբերգուական իրադարձությունների ցեղասպանությունները և միջազգային հաստատվեց Հայոց ցեղասպանության ՀՀ դրույտ առաջին ցեղասպանությունը շինելու պատճենական իրուրբունությունը:

Իսկ 2007 թ. հոկտեմբերի 5-ին Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան, կրկին անդրադարձով Արմենոցիի ճանաչման հարցին, ընդունեց մի նոր բանաձև, որտեղ ընդգծված է, որ «Օնմանը արշավանքը Կայսրության բրիտանիայ փորբամասնությունների դիմ՝ 1914-1923 թ. միջն ընթած ժամանակահատվածում, հանդիսանում է ցե-

դաստիարակություն ընդդեմ հայերի, ասիրիացիների, Պոլուսական և Աղետովիական հոգիների»<sup>210</sup>: Այսինքն՝ այդ քանաձնության ոչ միայն վերահաստատվեց Հայոց ցեղասպանության ցեղասպանությունը լինելու համամետը, այլև առաջին անգամ պաշտոնապես ընդունվեց, որ այդ նոյն ժամանակ Օսմանյան կայության տարածքում ցեղասպանությունը է կիրառվել նաև ասիրիացիների և հոգիների նկատմամբ: Կարծում ենք, որ դրա շնորհիվ ամենի է ծանրանում Թուրքիայի հանցանքը Օսմանյան կազմությունում կազմակերպած ոճքազորությունների համար: Իսկ մերս լորդից ամենի է հաստատվում Թուրքիայի «ցեղասպան պետություն» լինելու դրությունը:

Ցեղասպանացների միջազգային ասոցիացիան ցեղասպան մասնագետների և փորձագետների առաջնորդ կազմակերպությունն է: Միջազգային առողջության մասնակիցների այլ կազմակերպությունն, որը ցեղասպանացիոնության ընապահության կարողանար մարտահրավեր նետել պրոֆեսիոնալիստների այդ կազմակերպությանը, կասկածի տակ վերցել երա տեսակետները և կամ հերքել նրա հիմնադրությունները: Ցեղասպանության ընապահության, ինչպես ասում են, նրանից այն կողմ աշխարհ չկամ:

#### VII. Նորելյան մրցանակակինների հայանության դիրքորոշումը (Nobel Laureates Position). 2007:

Հայոց ցեղասպանության հանաժան հարցի գիտական առաջիկությ մի սպառիում և չեր է կարող սպառիլ միայն Ծննդառաջազնուների միջազգային ասոցիացիայի մոտեցումներով, թեև դրանք հիմնարար են, առածքային, անսարքելի և միանգամայն հավասարի: «ան նաև այլ օրակենքը, որոնցում արտահայտված մտնությունները գոյսի են լիովին հաստատելու ցեղասպանացների գիտական տեսակետները: Դրանց մեջ կցանկանածինը առաջին հերթին առանձնացնել Նորելյան մրցանակի դափնիկին Եվ Վիսելի Հայուն հոգածախօսի հիմնարարը, որը ցուցաբերեց մի կարևոր նախաձեռնություն: Նա պատրաստեց մի նամակ, որն ամենի շատ փաստացուրը է Հայոց ցեղասպանության և հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ: Այդ փաստարությ կամ նամակը 2007 թ. ապրիլի 9-ին ստորագրեցին 53 Նորելյան մրցանակակիններ՝ աշխարհի ամենաականավոր գիտականներից՝ պաշտպանելով ցեղասպանության ուսումնասիրությամբ զբաղվող գիտ-

210 Recognition of the Armenian Genocide. International Organizations,  
[http://en.wikipedia.org/wiki/Recognition\\_of\\_the\\_Armenian\\_Genocide](http://en.wikipedia.org/wiki/Recognition_of_the_Armenian_Genocide)

Խալբանների այն նորակացությունը, որ հայերի 1915 թ. սպանությունները հանդիսանում են ցեղասպանություն։ Համան աշխարհին ուղղված բաց Խալբանը աշխարհի այդ խոչը գիտնականները «Պարտավորացին քուրքական կառավարության ընտրությունը» ուղարկել են 1915-1918 թվականների զանգվածային սպանությունները և բոլի տնօքահանումները։ Օսմանեան կայսրությունը հանդիսանում են ցեղասպանություն։ Նրանք հավանություն են տաջն 2003 անկախ ուսումնասիրություններին, որոնք հավաստում են, որ 1.5 միլ օսմանյան հայերի սպանությունը լիրի համապատասխանում է ցեղասպանության միջազգայինը ընդունված դեմքնեցիային»<sup>211</sup>։

Նորելյան դափնենկիրների այդ նույն նամակով «Կոչ էին անում Հայութանին և Թուրքիային հաստատել դիվանագիտական հարաբերություններ առանց որևէ պայմանի, բայց սահմանները և խրախուսել քաղաքացիական-հասարակական շիրումները»<sup>212</sup>։

Նորելյան դափնենկիրների այդ անհախաղնակ նախաձեռնությունը ուժին կովկաս է Արմենոցիդի համընդհանուր ճանաչման համար, աւրապնդում և նոր լիցք է հաղորդում այդ գործներացին, ակրապերում այդ գործներացի գլուխական հիմքերը՝ մի կողմէց, և անսանի ծանր դրույթան և ծիծաղնի վիճակի մեջ դնում Թուրքիային։ Հայոց ցեղասպանությունը մխանելու իր ցաղաքականության հանդերձ՝ մյուս կողմից։

Բայց միայն Նորելյան դափնենկիրները չեն, որ իրենց ճայիր բարձրացրին ի պաշտպանություն Արմենոցիդի ճանաչման, պահանջելով դաստակարտել քուրքական ժամորդականությունը։ 2000 թ. հունիս ամսին «Եյու Թորք թարմաց» տպագրեց Հոլորուսի 126 առաջատար մասնագետների հայութարությունը, որտեղ ընդգծված էր, որ «Հայոց ցեղասպանությունները անհերթելի փաստ է»<sup>213</sup>։ Նրանք կոչ արեցին արևմտյան ղեկուցուատիաներին ճանաչել այդ իրողությունը։

Հայոց ցեղասպանությունը ճանաչել և թուրքիացի մխանդական քարաքականությունը մերժելու դաստակարտել են մի շարք գիտական հաստառությունները, այդ թվում՝ Երուսաղեմի հոլորուսի և ցեղասպանության ինսուֆտուսը, որը գլխավորում է ցեղասպանագիտության

211 Nobel Laureate Call For Armenian-Turkish Reconciliation, <http://www.rferl.org/content/article/1075779.html>.

212 Լույս տեղուն.

213 No Place for Denial,

<http://mpfdinfo.blogspot.com/2005/06/tags-leader-on-calls-for-impartial.html>

թեագավառում միջազգային մեծ հեղինակություն վայելող Խարայի Չարենի (Օու 2005-2007 թթ. նաև Յնողասպանակետների միջազգային սառցիացիայի պրեզիդենտն էր), Նյու Յորքի ցեղասպանության ուսումնասիրության ինստիտուտը, որի գործադիր տևորեն է մեկ այլ հեղինակավոր ցեղասպանագեն՝ Հյուն Ֆայլս, և այլն: Ռշադրության է արժանի ԱՄՆ-ի հրեաների համայնքների միության ընդունած «Մեկ միլիոն հայերի 1915 թ. ցեղասպանությունը» բանաձևը, որտեղ ասված է: «Մեկ և կես միլիոն հայերի 1915 թ. ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայի արյու պատմության ամենաամերայի եղերից մեկն է»: Այդ Միությունը որոշում ընդունեց ԱՄՆ-ի հրեաների Հոգրուսի թանգարանում բացել հայոց և այլ ցեղասպանությունների բաժինները:

Հայկական հարցին լուրահատուկ լուսնում նև ցուցաբերում Խոյանդիայում: Ականափոք ցեղասպանացես պրոֆեսոր Ռիչարդ Շարապը, որը համարվում է Յնողասպանության վերաբերյալ միջազգային օկրնիքի խոշորագույն մասնագետը և «Յնողասպանությունը միջազգային օրինակ» արժեքավոր ուսումնասիրության հեղինակը, մշտապես հղում է կառարում Հայոց ցեղասպանությանը՝ որպես Հոգրուսի նախակարապենություն և որպես մարդկության դեմ հանցագործության օրինակը<sup>212</sup>:

Եթե ասվածին ամենացնենք ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Լիետավանի, Միջ Երիտասահայի, Սիրիայի, Եգիպտոսի, Լիբանանի, Իրաքի Իսլամիայի, Արգենտինեայի, Կանադայի, Հունաստանի, Թուրքիայի և աշխարհի այլ երկների բազմաթիվ ականավոր գիտևականների առունելիքը որոնց անվերապահորներն ընդունում և ճանաչում նև Հայոց ցեղասպանությունը և դատապարտում թուրքիային այդ պատմական իրողությունը միանկար համար, ապա ակնհայտ կը դառնա: թե Արմենոցին ճանաչման հարցը միջազգային գիտական ինչպիսի բարձր մակարդակի վրա է գտնվում:

### VIII. Թուրքիայի մարդու իրավունքների ասոցիացիոն (Human Rights Association, Turkey). 2006:

Մարդու իրավունքների բորբական ասոցիացիայի հնարավորությունները, հասկանայի է, համեստ նև, ինչը կապված է ժամանակակից Թուրքիայում տիրող բարարական ասհմանախակ հնարավորությունների և դեմոկրատիայի ու դեմոկրատական ինստիտուտների անբավա-

Դար զարգացած լինելու հետ: Այդուհանդեմ, որոշեցինք հակիրճ կերպով անդրադառնայ այդ ասոցիացիայի գործունեության լուսաբանացյանը՝ հաշվի առնելով Թուրքիայում տեղի ունեցող խմբութերը, զարգացման միտումները և հետանկարները: Դար է հաշվի առնել նաև այն հանգանակը, որ Թուրքիայում արդին զգայի թիվ են կազմում այն մասավորականները, որոնք համարձակորեն հանդիս են զայն Թուրքիայում քաղաքական փոփոխություններ կատարելու, Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և իր պատուիքան հետ, այդ թվում և եղան և եղելի հետ հաշումներ պահանջներով: Դրանց թվում են, ինչպես արդին եշտի Շահիդ Զարակողուն, Թանը Արշակը, Աշխեն, Օրիան Փամիկուր, Մորուս Քելզեն, Անկարայի, Մտամրովի և Թուրքիայի այլ համայստանների պրովետորներ և այլք:

Մարդու իրավունքների ասոցիացիայի (ՄԻԱ) հիմնադիրների շարքում առաջնորդությունը պատկանում է իրավագանձներին, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցչներին, մուսկորականության տարրեր խավերին և այլք: Բայց այս դեպքում նշանակայի դերակատարություն են ունեցել բարձրագույն քանտուրկավանների բարեկամները և հարազատները: ՄԻԱ-ն հիմնվել է 1986 թ. հունիսի 17-ին համակիրների մի ոչ մեծ խմբի կողմից, որուց թիվը կազմել է մոտ 100 մարդ: Նա ունի 34 մասնաճյուղ Թուրքիայի 81 ենթակազմներում, իսկ առավելների ընդհանուր թիվը հասնում է 17 հազարի: Նրա շտար-կայսեր գունդում է Անկարայում: Թուրքական կառավարությունը մշտապես խառնվում ՄԻԱ-ի գործերին, հետապնդում նրա ակտիվիստներին, կառապում ձերքակարգություններ, իսկ երա անդամներից 14-ը տպանվել են: Ասոցիացիան իր տեսապայտում է պահում մարդու իրավունքների խավառման հարցեր Թուրքիայում, բրդական հարցը, քանտուրկավանների, նրանց նկատմամբ կուտանքներ կիրառելու, կամաց իրավունքների երեխաների պաշտպանության և համեմանակ այլ հարցեր<sup>215</sup>:

Նա անդրադառնում է նույն Հայոց ցեղասպանության ճանաչման հարցին և խիստ դիրքորոշում ունի Արմենոցիդ ժմանելու բորբոքական իշխանությունների բարձրագանձության նկատմամբ: Այդ առումով ոչազբան է Թուրքիայի Մարդու իրավունքների ասոցիացիայի Ստամբուլի քամանությունի հայտառարությունը Հայոց ցեղասպանության վերաբերյալ, որի մասին մանրակ հասուն հայորդում է տեղի ունեցել 2006 թ. ապրիլի 24-ին, արսինըն: Հայոց մեծ եղեռնի իրականացման տարե-

215 Human Rights Association (Turkey), [http://en.wikipedia.org/wiki/Human\\_Rights\\_Association\\_\(Turkey\)](http://en.wikipedia.org/wiki/Human_Rights_Association_(Turkey))

դարձի օրը<sup>216</sup>: Ան այդ փաստաթղթի հիմնական հարցադրումները՝ դրսպեսները և քարոզումները:

«Այս օրը՝ ապրիլի 24-ը, համայն աշխարհում բայցորին ճամաչվում է որպես մի տարեթիվ, որը նշանավորում է Հայոց ցեղասպանությունը: Միայն Թուրքիայում է, որ որևէ տարր է դրված Թուրքական պետությունը գորակոչում է իր բոլոր ժողովուները՝ ժխտելու այս օրվա իմաստը: Դիմանապիտական հարթակներում թուրքական պաշտոնյաները և նրանց դատապահատապանները հանձնվում են առևտ, որ այդ օրը նրանք ճամասուն են որպես «Մած եղենն», և որ նրանք միայն առարկում են այն անհանձնելի «Ցեղասպանություն»: Կա միշտ չէ: Անեն առիթով Թուրքիայում ոչ միայն Հայոց ցեղասպանությունը, այս ինչ ժողովուի մեջ հոգեվարդը ժխտվում է և փորձեր են արվում արդարացնելու ցեղասպանությունը»<sup>217</sup>: Այսուհետև հիշատակվում է, որ հայ-բարբարական հարաբերություններին նվիրված Սիմոնովին ճամանակ «միեւ մյուսի հետուից բարձրածայնվեցին մերժողականների պաշտոնական թեզերը՝ վիրավորվող համերին Թուրքիայում և ամենուր և անարգելով նրանց պապերի հիշատակը: Սուսը ներկարացնուում էր հանուն «ցեղասպանության», ինչպես «Հայերը մշտապես ծախել են իրենց տերերին», «բռնազարդը ճգնաժամը կարգավորելու միջոց էր», «բռնազարդի ժամանակ մահման բարձրակետը համեմատելի է այդ ժամանակ Անգլիայում գրիսի խայրեմայից մահացածների բարձրակետին», «աշխարհում չկա որևէ այլ ազգին ազնիվ ժողովուրդ, ինչպիսին բուրք ժողովուրդն է, նրանց հանուր անհետար է ցեղասպանություն իրազործելը և շատ այլ բաներ՝ ծարդելով մի ժողովուի, որը գիտության, արվեստի, գրականության մեջ և այլ սպառաւներով առավել գորգացածներից ե»<sup>218</sup>: ՄԻԱ-ն հավաստում է, որ Ցեղասպանության միտուուն ներնին մարդու իրավունքների կրախանուում է, որն «անհամաններին գրկում է իր նախնիների համար, մի ժողովուի երեխ մարդուն, բոլոր տարիեւների մարդկանց, բոլոր պյունիշաների, տղինական սեկուլունների, կանանց, տղանարդկանց, երեխաների, նորածինների, ապուապապերի ֆիզիկական ոչչացման համար սպաց իրավունքից» միայն այն բանի համար, որ նրանք հայեր են»<sup>219</sup>:

216 Human Rights Association of Turkey, Istanbul Branch. Press Release. 24th April 2006, [http://www.armenian-genocide.org/Affirmation.362/current\\_category.5/affirmation\\_d](http://www.armenian-genocide.org/Affirmation.362/current_category.5/affirmation_d)

217 Լույս տեղուն:

218 Լույս մեղուն:

219 Լույս տեղուն:

Փաստաթղթում տեղ է գտել նաև մի վերին աստիճանի, մենք կասեիք, հիմնադրույք: Նկատի ունենք հետևյալ կարևոր եզրահանգումը՝ «Թուրքիան հազիվ թե որևէ առաջընթաց է արձանագրել համագոյակցության, դեմոկրատիայի, մարդու իրավունքների դաշտում և վերջ դնելու միջնորակության»: Առաջին առաջարկությունը կոմիտեի (այսինքն՝ Կոմիտուրություն՝ Ն. Հ.) ժամանակներից ի վեր: Ֆիդիկանակ ոչխացանում և Ժիումալ եղել է, շարունակվում է ասօք՝ հանդիսանալով պրոբլեմները բանի միակ միջոցը... Արյունահերթում մշտապես եղել է հայրի հայրենիքում (իւս՝ Արևմոյան Հայաստանում՝ Ն. Հ.) 1915 թ. հետո»<sup>220</sup>: Շատ ազդեցիկ է թուրքական իրավապահների այս փաստաթրի եզրափակիչ մասը, որտեղ կարդում ենք: «Այսօր մենք՝ մարդու իրավունքների պաշտպաններս, կցանկանայինք դիմել բոլոր հայերին Թուրքիայում և աշխարհի բոլոր մասերում և առաջ նրանց՝ մենք ցանկանում ենք կիսել ձեր սրտի ցավերը և խոնարհելի ձեր կորուստների հիշատակի առջև: Նրանք ենք մեր կորուստներն են: Մեր պայքարը Թուրքիայում մարդու իրավունքների համար մինույթ ժամանուի մեր առջև է մեր բոլոր կորուստների համար և հարգանք ցեղասպանության գոհերին»<sup>221</sup>:

Զենք կարծում, թե թուրքական այս փաստաթրությաց մեկնարանից կարիք կա: Ամեն ինչ ասված է հասուն: Միայն կցանկանայինք շեշտել մի հանգանակը: Այս փաստաթրությաց արդի թուրքական կարուալարության բաղադրականությունը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հարցում իր ճշմարտացիությամբ, աելորդ թնօնաստությամբ, իրերն ու դեսքերն իրենց անուններով կոչելու, թուրքական նախորդ և ներկա դեկանարությանը մերկադրանք ներկայացնելու առումով, մի աննախառնակ մերկացնող փաստաթրություն:

Թուրքիայի մարդու իրավունքների ասոցիացիան բորբական դատարանից հետո, ոքը 1919–1920 թթ. երիտարքական հանցագործ դեկանարությանը մեջամիտ ճանաչեց Հայոց ցեղասպանությունն իրագործելու և հայերի բռնի տեղահանման մեջ, և նրանց առաջին դեմքերին դատավարության մահվան, առաջին մարմինն է՝ առցիացիան կամ ընկերությունը, որն այդպիսի վճռականությամբ ընդունում և ճանաչում է 1915 թ. Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանությունը, դատավարությունը այս ժամանելու թուրքական կարավարության սահմանադրությունը:

220 Խոյն տեղում:

221 Խոյն տեղում:

## **IX. Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա (ԵԲԱ) (Young Men's Christian Association. YMCA), 2002:**

Ասոցիացիան կազմակերպված առումն որևէ առևտոքուն չունի Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հետ: Նա անկախ և ինքնուրույն կազմակերպություն է, որը հիմնվել է դեռև 1844 թ., Լույդլուում: Նա այժմ միավորում է 124 ազգային կազմակերպություն և ունի մոտ 45 մինչ անդամ:

Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիան, հավատարիմ իր քրիստոնեական կողմանը, հետաքրքրություն է ցուցաբերում նաև Հայոց ցեղասպանության ինտերներին: «Հայօքանատքներն ուսումնասիրելով այդ հարցը՝ Ասոցիացիայի համաշխարհային խորհրդը 2002 թ. հունիսի 20-ին, Մերժիկարության գումարված իր նիստում Եվլուպական ալյանսի սկսումից հրապարակեց համուկ հարտարապերյան: Նրանում նշվում է, որ հայ ժողովուրդը մեծ տրամադրություն է ապօպու, որի պատճեաց ոչ միայն այն է, որ զետև չի ճանաչվել Հայոց ցեղասպանությունը, այլ նաև որպես արդյունք աշխարհի մեծ մասի անսուբթերության հայոց ցեղասպանության նկատմամբ, որն իրականացվել է XX դարի սկզբներին»<sup>222</sup>: Երիտասարդ քրիստոնյաները շատ հետաքրքիր տեսակետ են արտահայտում ընդունով, որ անցյալուն կատարված «անսուբթերության ճախորդական ներդրում» է համայնակուն նրանց կրկնական գործին ապագայում<sup>223</sup>: Ըստ հասակ է ասեմանելիք այդ փառաւարքի եզրափակիչ հասկածը: «Մյու համեզմունքով, ԵԲԱ-ի Համաշխարհային ալյանսը, որը հավաքվել է իր Համաշխարհային խորհրդի նիստին, 2002 թ. հունիսի 20-ին Օբարեփերում (Մերժիկան) ճանաչում և դատապարտում է հայ ժողովուրդի ուժը գործած ցեղասպանությունը և կոչ անում ԵԲԱ-ի բոլոր Ազգային շարժումներին նույնական ճանաչել և դատապարտել դրա»<sup>224</sup>:

## **X. Մերկոսուր (Mercosur), Հարավային ընդհանուր շուկա, 2007:**

Տարածքային առևտրական համաձայնացիր Արգենտինայի, Բրազիլիայի, Պարագվայի և Ուրուգվայի միջև: Հիմնվել է 1991 թ. և գործողության մեջ դրվել 1994 թ.: Նպատակն է նպաստել ազատ առևտուրին և առցանցքներին, Վարդեկանց ու վայրուտայի ազատ տեղաշարժին:

222 European Alliance of YMCA, July 20, 2002,

[http://www.armenian-genocide.org/Affirmation.271/Current\\_Category/5Affirmation\\_d...](http://www.armenian-genocide.org/Affirmation.271/Current_Category/5Affirmation_d...)

223 Առյուն տեղուն:

224 Առյուն տեղուն:

Անդամ երկրներն են՝ Մրգենտինսան, Բրազիլիան, Պարագվայը, Շիլին, Կոլումբիան, Էկվադորը և Պերուն, դիմորդ՝ Մեքսիկան: 2004 թ. կողմերը համաձայնվեցին իհմնել պառամենան, որը յարաքանչյոր երկիրից ունի 18-ական ներկայացոցից<sup>225</sup>: 2009 թ. տվյալներով՝ անդամ շրու պետություններում ապրում է 242 մլն մարդ, որից 192 մլն Բրազիլացուն: Պաշտոնական լեզուներն են պրոտոգվաներներ և խազաներներ:

Մերկոսուրը թեև առևտրատեսաւանական կազմակերպություն է, տակալն առաջարերի չեն նաև բարյարական հարցնի նկատմամբ, մասնաւոր այնպիսի հարցերի, որոնք այսօր հոգում են միջազգային հասրությանը: «Անկախարժելով այդ նկատառումներով՝ Մերկոսուրին հատուկ վերաբերմունք է ցուցաբերում նաև Հայոց ցեղասպանության նկատմամբ»:

2007 թ. Խոյնմբերի 24-ին Մերկոսուրի պաղամենոց ճանաչեց և դատապարտեց Հայոց ցեղասպանությունը, որի մասին հասուլ հարցը դամական արվեց: Նրանում տախած է, «Անդամ շրու երկրների՝ Արգենտինայի, Բրազիլիայի, Պարագվայի և Ուրուգվայի օրենսդիր ներկայացուցիչները դատապարտում են «Օսմանյան կայսրությունում իրազործված Հայոց ցեղասպանությունը, որը 1915–1923 թվականներին խլել է 1,5 մլն կանակ»<sup>226</sup>: Բանաձևն իր աջակցությունն է հայտնում Հայաստանին և կոյ անուն բռնություն երկրներին ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Նշված բանաձևը ներկայացրել էին Արգենտինայի և Ուրուգվայի ներկայացուցիչները, արժանացել Մարդու իրավունքների կոմիտեի հավանությանը և ընդունվել Մերկոսուրի արողոջ պաղամենուի կողմից<sup>227</sup>:

Ռուսաբարձ է այն պարագան, որ եթե ներուգվայը և Արգենտինան վայրոց արդեն պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, ուստի Մերկոսուրի պաղամենուում նրանց ներկայացուցիչների բանաձևին կողմէ թվարկելը միանելաւայն համեստայի է, առա Բրազիլիան և Պարագվայը դեռևս չեն ճանաչել Արմենությունը Սակայն Մերկոսուրում նրանց 36 պաղամենուական ներկայացուցիչները 2007 թ. Խոյնմբերի 24-ին Խոյնավես Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու կողմէ թվարկեցին, որը զայն է հաստատելու մեջ այն տեսակինը, որ Արմենությունի ճանաչման դաշտում անբնորհան ընդունվում է.

225 Mercosur, <http://en.wikipedia.org/wiki/Mercosur>

226 Խոյնմբեր:

227 Mercosur Parliament recognises and condemns the Armenian Genocide,

<http://www.armenian-genocide.info/2007/11/mercousu-parlamenti-recognises-and.html>

որովհետև երանք չէին կարող այդ բայլին դիմեց առանց իրենց երկրսերի կառավարությունների գիւտության և հավանության։ Մանավանդ, եթե նկատի առնենք, որ Մերկուրի պատվամնարը հիմնվել է նրա անդամ պետությունների պրեզիդենտների գաղաքաժողովում ընդունված որոշման համաձայն։

## **XL. Զանգվածային լրատվամիջոցներ. Մաս մնյամ:**

Ծեղսաբանության ձևականական գործում անզեահատմբի է միջազգային զանգվածային լրատվամիջոցների դպրակառարությը։ Մեծ է նաև նրանց եզակակույցները ցեղասպանությունը մեռնելու դեմ մշցիող պայքարում։ Մեր օրերում, նոր անշատ ամեն է լրատվամիջոցների՝ օրաբերդների, ամսագրերի, ուսուցիչի, հեռուստառակոստրյան դերը հասարակության, բարերարեան և առօրյա կյանքում, չեն կարենի հաշվից դուրս ենանել այդ կարևոր գեները, որն ընդունակ է շարժման մեջ դնել տասնական և հարյուր միլիոնավոր մարդկանց։ Ճամփորդ հասարակական կարծիքը, մերկացնել ստուն ու կերծիքը, այդ բառով նաև պատումական հարցերի մերքաբերյալ, և ուղի հարքել արդյունքրյան և ճշնդատության հարցանակի համար։ Առաջար հաւաքավելու վերաբերում է միջազգային մեծ հետինակորյառու վայելող այնպիսի լրատվամիջոցների, ինչպիսիք են մի շարք ամերիկան, անգլիական, ֆրանսիական, ռուսական, գերմանական և այլ լրատվամիջոցները՝ ամերիկան «Լոյոլ Յորը բարձու», «Ալոյի ինքը պրես», անգլիական «Թայմս» և «Բելգիական Յունիոն», ֆրանսիական «Լ. Մոնդը» և «Է. Յ. Ֆիզարոն», գերմանական «Հայդգելը», ռուսական «Իզմայլովիան», եզիզատական «Ռուզ աշ-Յուսուֆը» և բազմարին այլ թերթեր, որոնց տպարանակի անցնում է տասնական և հարյուր միլիոններից, հեռուստառակային կարաներ և այլն։ Ժամանեալիքն երանցից շատերն անմիջապես անդրադարձել են 1915 թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայոց ողբերգությանց և առաջններից մեկը միջազգային համբուրգական տեղյակ պահել առնացան բարբարությունների մասին։ Արդի լրատվամիջոցները շարունակում են իրենց նախորդների այդ ազնիվ ավանդությունները։

Հասկանայի է, որ այժմ հեարաւոր չէ անբրայանու մերօքա բոլոր հրատարակություններին։ Շնորհ կրաքարարիներ՝ Աշնորդ միայն «Լոյլ Յորը բարձու», որի մասնակիութեան այս կամ այն շափով ընդհանուր են նաև մյուսների համար։ Այդ լրագրի հրատարակչական խորհուրդը 2004 թ. ընդունեց որոշում առ այն, որ «1915 թ. դեպքերն ընկառում են «գելուցի»

դիւ ասիմանման տակ և նոր հրատարակվող հոդվածներն այս թիմային նև վերաբերում, ապա հրատարակչական աշխատակազմը միշտ օգտագործելու է «գննոցիդ» բառը»<sup>228</sup>. Այսուհետու թերթի խմբագրությունն ուղարքություն է դարձելու այն հանգամանքի վրա, որ «Հայրի բայնաժամանակակից ապահովություններն օւժական բռրքական կառավարության կողմից XX դարի սկզբներին ոչ ճիշտ կերպով նկարագրվում է որպես սպանություններ, որի ընթացքում 1,5 միլ հայ զոհվեց: Թերթի խմբագրությունը պարզաբանում է, որ դա ցեղասպանություն էր և ոչ թե «ջարդեր»<sup>229</sup>:

Կարենի է ասել, որ հայարակական մեծ հնձնություն ունեցող և շատերին մասնաւոր մի աղբյուր ևս իր ձախը միացնում է բազմաթիվ այլ աղբյուրների, որոնց հաստատ կանգնած են այն տեսակնուի վրա, որ 1915 թ. Օսմանյան կայսրությունում ծրագրավորվել և բարրարության իրականացվել է հայերի ցեղասպանություն՝ անբարութեան համարելով «Հայոց ցեղասպանության» շիռբումը «Հայկական ջարդերի հետ»:

Ահա այսպիսին է միջազգային գանազան կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին անդրադարձման ընդհանուր պատկերը: Ինչպէս, բացի վերոնշյալ կազմակերպություններից, կան ևս այլ միջազգային կողմանիներպարփուներ, միուրյուններ, ասոցիացիաներ և այլն, որոնց սառ կու այս անիրող անդրադարձել են Հայոց ցեղասպանությանը: Բայց, մեր կամքիրով, նշվածներն առավել հիմնուին կամ հանգամանորեն են լուսաբանել մեզ հոգող հարցերը:

Նրանց մոտ ընդհանուրն ան է, որ նրանք կարողացել են առանձնացնել հիմնախարդերի և նրանց տայ փառարկված պատասխաններ՝ հիմնված անժամուի առջյուրների վրա: Եթե ի մի թերեկո լիներ, այս դրանք չորսն են, առաջին նրանք բոլորն ընդունում և ճանաչում են Արմենոցիդը՝ որպես ցեղասպանություն կամ այլին ճիշտ «ամենագործոցիւրային գննոցիդ», երկրորդ գուման են, որ Արմենոցիդ XX դարի առաջին ցեղասպանությունն է, երրորդ՝ դաստակարտում են երիտրության կառավարության Օսմանյան կայսրությունում՝ Հայոց ցեղասպանությունը հայերի թօրքական իրազորմերը, իսկ համբավնուական թուրքիայի թօրք կառավարություններին՝ Հայոց ցեղասպանության փաստը մխտելու և հայ մողովուից ներություն խնդրելուց հրաժարվե-

228 Խոյն տեղում:

229 The New York Times: Events in 1915 Were not a "Massacre", It Was Genocide, 7.04.2007.

իր համար, և չորրորդ՝ կոչ անունը բայց երկրներին ճանաչել հայոց ցեղասպանությունը և դատապարտով բուրքավան կառավարության միտուղական դիրքորոշումը Արմենցինի ճանաշման հարցում:

Նրանք իրենց մոտեցումներում ունեն մի կարևոր ընդհանուրություն: Միջազգային բարոյ կազմակերպությունները Հայոց ցեղասպանությունը քննարկելում են «Յեղասպանությունը ոճրագործություն է համայնքարդկության դեմ» համատեքստում՝ ընդունելով, որ եթե ցեղասպանությունը չդատապարտվի, իսկ նրա հանցագործները չպատժվեն, ապա հնարավոր չէ ընդհանուրապես կատիվ այն և թույլ չտալ, որ նա այնու չկրկնվի:

# ԱՐՄԵՆՈՒԹԻՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՀԵՐԵԵԼԻ ԻՐԱԳՈՒԹՅՈՒՆ Է

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Եվ արագիս՝ մենք հասանք մի կարևոր սահմանագծի, որից այն կողմ գտնվում է միայն մի հարց՝ ինչ անել, հանաձայնվելի տիրապետող այն տեսակենտի ինտ, որ Արմենոցից-Հարասպանությունը դեռևս պաշտոնապես չի ճանաչված և չի ընդունված աշխարհում, բայց ցուցաբերելով նոր և ավելի բարեհաջող մոտեցումներ, հենվերդով մեր սեփական ուսումնաբրույրունների արդյունքների վրա՝ հաջորդաբարել, հաստատել և պեղի, որ Հայոց ցեղասպանությունը տիպարանուրեն պատկանում է միշազգայնութեան ճանաչված ցեղասպանությունների շարքին:

Ստեղծվի է մի այսպիսի իրավիճակ, եթե երկու պարզումներն էլ, դրական թե բացասական, կապված են մեծ պակերքի հետ: Եվ կարևոր պատեհ արև չէ, թե որ տեսակենտի կողմնակիցներն են ամենի շատ: Հանրահայտ ճշմարտություն է, որ գիտության մեջ արև կամ այն տեսակենտի կամ հիմնաբրույրի լուրջնակիցների ավելի կամ պակաս ցննելը միշտ չէ որ գիտության համեցիչ ժամանակը է, ինչպես, առնենք, պարզումնաւկան, տեղական կամ այլ ընույթի ընտրությունների ժամանակը: Կարևոր ժամանակների ուժեղ, համեցիչ և տրամարանական լինելը է, նրանց զրավորությունը, սպասությունը և հնարավորությունը, հարցերի ընթարքման և վերլուծման բարեհաջող մեթոդանուրույնը, կարծրատիպերից ձերբագալման, ոչ դրամարական, ազատ, անկաշկան մոռածներից դրանում: Այդ որոշությունը միասին տալիս է անը մոռեցում»:

Նոր մոտեցումը տվյալ դեպքում օդի պես անհրաժեշտություն է, մասնաւոր որ չկան ցեղասպանության ճանաչման միջազգայնութեան ընդունված և անվիճմանի չափանիշներ՝ կրիտերիաներ: Մըն է այն չափանիշը, որը մասնաւոր անհեռլ կամ որի վրա հենվերդով՝ կարելի ասել, իւղում, այս երևույթը կարելի է և պետք է ընուրագրել որպես ցեղասպա-

նորբերուն, իսկ այս մոլուց դեռ չի հաստինացել դրա համար, քանի որ նա դեռ չի բավարարում այս կամ այն պահանջեներին:

Միդունց ճանաչման հիմքում դնել տվյալ ցեղասպանության ՄԱԿ-ի անդամ պիտույքունների որոշակի թվաքանակի կողմից ճանաչված լինելու հասգամանը: Հարուսի է, որ այսօր ՄԱԿ-ի անդամ ևս աշխարհի 193 ինքնիշխան պիտույքունները: Դրանցից բաենք է ճանաչյի այս կամ այն ցեղասպանությունը, որ տվյալ թվաքանակը բավարար համարդի ճանաչման համար: Կամ ով և ինչ սկզբունքներով, ինչպես պես է որոշի այդ կրիստինական ասիդանը: Չի կարենի ըլերունել որպես չափանիշ ցեղասպանության ճանաչված լինելոց ՄԱԿ-ի անդամ որոր 193 պիտույքունների կողմից: Դա գործնականում անհնար է և անհեթերթություն, քանի որ եթե անզամ մեկ պիտույքուն, նույն ինքը՝ ցեղասպանություններ իրագործած երկիրը, ովք լինի կամ ովք թվաքարի, ապա դրա բավարար է, որ այս կամ այն ցեղասպանության ճանաչման հարցը փակվի: Չի կարենի մի այնպիսի բարյ երևո-քաղաքական հիմնախնդիրը, ինչպիսին ցեղասպանությունը է որպես հանցագործություն ընդունելու համար մարդկության, վերածն պարզ դադրույթական թվաքանական հաշվարկների: Իսկ եթե ինքը ընդունվի այլ թվաքանակը, ասենք՝ 25, 50, 100 կամ 150 պիտույքուն կողմից ճանաչված լինելու սկզբունքը, ապա ինչ հիման վրա, ասենք 120-ը պես է համարվի ընդունելի, իսկ ոչ ոչ: Հարցականները շատ կան: Հասնարար այդ մոտեցումը չի աշխատի, մատակարակ որ նաևս որոշում ընդհանրապես գրաբրյուն չունի և պատահականություն չի, որ գոյրություն չունի:

Կամ, օրինակի համար, հարցականի տակ չի դրվում Կամքայի, Ռուսանքայի, Բուրժուսիի կամ Դարձուրի և այլ պիտույքուններուն իրացրծիւած համարյա որոր ցեղասպանությունները: Ինչ հիման վրա: Ինչքան մեզ հայտնի է, դրանցից և ոչ մեզը չի ճանաչված ՄԱԿ-ի անդամ որոր երկրների կողմից: Իսկ հարց է ճագում, ինչ հիման վրա դրանց ճանաչվում են, իսկ Արմենոցինը՝ ոչ ես 1965 թվականից գրաբլիւմ եմ ցեղասպանության ուսումնասիրությանը, քայլ ինքս ի վիճակի չեմ դրան սպառիչ պատշաճանառություն տայ:

Կա միայն մեկ ցեղասպանություն, որի ճանաչման հարցը հասուն է, և այսօր վեծի առարկա չի հանդիսանում: Դա իրենական Հորբուռուն է:

Ցեղասպանության ճանաչման և երա հանցագործության համար սահմանված միամասական չափանիշների բացակայությունը բացառքով է արդի աշխարհի բազմազանությամբ և հասարակությունների բազմաչեղությամբ, պիտույքունների մեջական բարյաքանակն, տնտե-

սական և ազգային միմյանց հակառիք շահերի առկայությամբ, որի արդյունքում թեկարկությունների ժամանակ ցեղասպանությունների և դրանք իրագործած հանցագործներին պատճենու հարցում ծագում էն տարրեր, շատ հաճախ իրարամերժ տևալիքներ, որոնք ուղղակիորեն անդրադառնում են ցնդասպանությունների ժամանակ հարցի վրա:

Ստացվել է այնպես, որ այդ խնդիրները թնձելիս դասական է համարվում միջազգայինորեն Հողորոտության ճանաչման նախադիմաք: Հողորոտության ռերեց այն առումով, որ երա որպես ցեղասպանություն ճանաչելու հարցը, պատևականորեն և ժամանակի առումով համընկավ Նյուրներները գոյացնելու հիմներյան-հացիառական գլուխաբորբայան դաստավարության հետ, որն իրականացնում էր ԱՄՆ-ի, Խորհրդային Միության, Չինաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունների որոշումով առնելված Միջազգային տրիբունաց: Դա թնդումնելի է որպես էտաղն և Հողորոտության հետ ցեղասպանության հնքարկված բոլոր ժողովորդները ցանկացել են ունենալ նման ինչ-որ մի բան, միջազգայինորեն ճանաչված ինչ-որ դաստարակի վճռ, որը որպես պարտադրության փաստարությ կընդունի բոլորի կողմից և չի վիճարկվի: Հայտնի է, որ Նյուրներների դաստարակ կախաղանի միջոցով մահելու դաստավարություն բոլոր այն գերմանական դեկավարներին, որոնց չեն հասցրել միեցել դաստավարությունը ինքնասպանություն գործել, ինչպես Հիուները, Գերեզը, Գյորինցը (արդեն բանափառում) կամ չեն կարողացել ճողովարել, ինչպես Բորմանը, Հիմլերը և այլք: Միաժամանակ այդ դաստավարությունը ճանաչեց հետական Հողորոտությունը:

Եթե այս տեսանկյունից ենք մոտենու Արմենոցիդից և Հողորոտության իրավականացման բոլոր ցեղասպանություններին, ապա տեսմուն ենք, որ բոլոր դրանք ունեն իրենց լորսահանդուրյունները: Ոչ մի դիպրում դաստավարություն չի եղել, որը թնարկեր, դաստավարուելու կամ պատճեր այդ ցեղասպանությունների դեկավարներին: Համբուցայուն 1975-1979 թթ. տեղի ունեցած ցեղասպանությունը, որին զոհ է գլաւցի մեկուկես միվելու մարդ՝ երկրի թնարկության լորսաբեշյուր ինսգի մեկը, հրականացրել է ոչ թե օտար երկինական խումբ, այլ այդ նոյն երկրի կառավարությունը՝ Պոլ Գուտի գլաւավորությամբ, սեփական ժողովրդի նկատմամբ, գաղափարական նկատառությունով, որն արտացոց երևոցը է՝ Կամբոջացիներն իրենք չկարողացան եթ զանել առեղծված վիճակից, տասքայի սևիական ժողովրդի նկատմամբ ցեղասպանություն իրականացնող հանցագործ վարչակազմը և պատճե նրա ղեկավարներին: Դա իրազործեցին հարևան Վիետնամի ղեկավածութեանը:

որուց 1979 թ. ներխուժեցին Կամբոջա, տասկալեցին Պու Պուտի վարչակարգը և վերջ տվյալին ցեղասպան գործողություններին: Սակայն այդ հանցագործության առաջին դնմքերից և ոչ մեծէն իր արժանի պատճիք չառացավ: Այդուհանդերձ, դա ընդունվում և ճանաչվում է որպես կարգած ցեղասպանություն:

Դարձուրում՝ Մուռանու, XXI դարի սկզբներին իրազործված ցեղասպանության գործ է դարձել մոտ 400 հազար մարդ, իսկ 2 մին մարդ է դարձել է փախստական: Սկզբնական շրջանում Դարֆուրի դեպքերը չեն ընդունվում և ճանաչվում որպես ցեղասպանություն: Համեմատես անօիջում դիրք էր զրայի ԱՄՆ-ը: Վերջապես այդ եղան ԱՄՆ-ի մշցման տակ հաստուկ հանձնաժողովը ուղարկվելուց Դարֆուր, որը տեղում պետք է պարզեցր, թե այնուն ծովալվող իրազարձությունները կարևի չ դասե ցեղասպանությունների շարքը: Հանձնաժողովը, որը նոյն Դարֆուրում այդ հարցին դրական պատասխան տվեց: Դարֆուրի ցեղասպանությունը ճանաչվեց ոչ թե դաստիարական աշխարհում, այլ ընդունվել մի քայլ հոգուց բաղկացած հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Այդուհանդերձ, Մուռանի կառավարությունը, որը մեղավոր է համարվում այդ ցեղասպանության համար, ոչ մի պատճի շնորհարկվեց, իսկ նրա պրեզիդիւն Ռուսար Հասան ալ-Աման Քաշարը շարժանակում է պետք, թե Դարֆուրում ոչ մի ցեղասպանությունը չի իրականացվի: Եթե չեցած այդ համեզանաւերին՝ Դարֆուրի ցեղասպանությունը նպաստվում է կարգած և բոլորի կողմից ճանաչված ցեղասպանությունների շարքում:

Այլ տարրերակ օգտագործվեց և չափանիշներ գործադրությունին նախկին Հարավսկալիխայի պարագայում՝ կապված Սնորիայի, Բռուիայի, Հերցեգովինայի և Կուսավոյի իրադարձությունների հետ: Այս դեպքում ժամանեց մեջ մտավ ՆԱՏՕ-ն և նրա ռազմական ուժերը՝ աշխացիայի, տանկերի և ծանր իրանուանու գործադրությամբ հասակ հարցի «գումանը», որը, արյունաներից, խարշադրություն և կարունություն չի հաստատել Բայկանուրում: Կիրառվեցին մի շարք պատճամիջոցներ, այդ թվում Սնորիայի պրեզիդիւնը Մյուրուան Միլոշչիչը դրվեց այլապիսի վիճակում, որ տունակած էր հանձնվել Բրյուսիի նվազական դաստիարակին, որի խունքից մնելու նա կերպ իր մահկանացուն:

Եվ պայման կարևի չ նման օրինակները շարունակեն:

Մակարի վերադառնեանը Հայոց ցեղասպանությանը: Մներ արդին տվել ենք Հայոց ցեղասպանության և Հոլորուսի համեմատական վերընթարյունը: Աքան ի հայու են գալիս նոր ընդիանրությունները և տարրերությունները:

Հայոց ցեղասպանության դնապրում էլ եղիլ է դատավարություն, նոյնիսկ ավելի վայ, բայ թե Նյուրներգյանը՝ Հոլոքոստի դնապրում։ Հայոց ցեղասպանությունը ճանաչվել և դատավարությունը է բորբակած, սուրբանական լեզիտիմ դատարանը։ Երկու դնապրում էլ Արմենոցիդի և Հոլոքոստի, նրանց հանցագործները դատավարությունը նն մահվան։ Գերմանական հանցագործների պարագայում մահվան դատավարություն ի կատար է ածվել Միջազգային դատարանի կողմից, միևնույն Հայոց ցեղասպանության պարագայում բորբական դատարանն ի վիճակի շնորհ միավան դատավարություն ի կատար ածելու ժողովական դատավարությաններից և ոչ մեկն այնքան արժանապատվությունն և տղամարդկությունն չտնեցավ, որ ինքնապահություն գործնք, ուստի և բորբական հանցագործների վերաբերյալ մահվան դատավարություն ի կատար ածեցին հայ վրիժապուները, որոնք իրավամբ համարվում են ազգային հերոսներ։

Այդ դատավարությունը և նրա որոշումները մոռացության են տրված, և բորբական դեկանարներն անտեղյակ են ձևանում, իբրև յն նման բան տեղի չի ունեցել։ Սակայն ինչպես լատինական ասացվածքն է հաստատում «Ի՞նչորանցիս են եսու արքունիուսում» — «Ուստի եղակ լինելը (կամ շիմանալը — Ն. Հ.) փաստարէ չե»։

Եվ այսպես, եթե դատարանի միջազգային թե ազգային, կողմից ցեղասպանության դատավարութումը և նրա հանցագործներին մահվան դատավարությունը հիմք է տալիս տվյալ ցեղասպանությունը համարել կատարված՝ իր դրասական տարրերակով, առա պարզ է, որ առայժմ նման կոչման արժանի են միայն 1915—1923 թթ. Արմենոցիդ-Հայոց անությունը և 1939—1945 թթ. իրեական Հոլոքոստը։ Այդ հարցում գիտական աշխարհի դիրքորոշումը՝ ի դեմք ցեղասպանագետների և նրանց Միջազգային ասոցիացիայի, այսօր անսահման է և ոչ մի կասկած չի հարցում։ Գտնում ենք, որ կասկած չի հարցում նուև իրավագելուների դիրքորոշումը։ Սիսպիս չենք լինի, եթե ասենք, որ այս պարագան նոր կարգավիճակ է տալիս Հայոց ցեղասպանությանը, որը բոլոր պարամետրերով մոտ է Հոլոքոստի կարգավիճակին։

Դատավարության հարցն այնքան կարևոր է, որ ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջիմի Քարտերը, ընդգծելով հանդերձ, որ «1916 թ. նախորդած տարիներին առույգ բային կատարվեցին ողջ հայ ժողովրդին ոչխացնելու համար», ամենացնում է, որ հայերի պարագայում «մրւած Նյուրներգյան դատավարություն տեղի չտևեցավ»։ Բացազիած չե, որ ԱՄՆ-ի պրեզիդենտը տեղեկացված չի եղիլ 1919—1920 թթ. Աւոամբուլում բորբական դատավարության և դատարանի կողմից ընդունված որոշումնե-

որի մասին, որի կետնից մեկը երիտրոլիզական դեկավարությանը ներկայացված մօղադրանքն է հայերին ֆիզիկապես ոչխացնելու և բռնագաղցն իրականացնելու համար: Դրանում զարմանալի բան չկա, բանի որ, ինչպես եղին է, այդ դատավարության նորությունը խնամքով բարձրվել և մասշերի չնն եղի ոչ միայն պետական և քաղաքական գործիչների, այլև մասնագետներից շատերի համար:

## 2. ՑԵՂԱՍՊԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ստեղծված պայմաններում առաջին պրանու հայտնվում է ցեղասպանության ճանաչման չափանիշների մշակումն այն հաշվով, որ նա նկատի առնի յուրաքանչյուր ցեղասպանության յուրահամարկությունը՝ պահպանելով նրա տարրերակից զծիքը: Մենք բավկականին երկար ժամանակ է մոռում ներ այդ մասին և Արմենոցիդի ճանաչման պարագայում կանգ ներ առն առնելով չորս տեսակի չափանիշների վրա, որոնք մեզ բվում է բավարար հիմք կարող են հանդիսանալ Հայոց ցեղասպանությունը ճանաչված համարելու համար՝ մի կողմից, և Ժառողությունից «իշաստարկեները» հերցելու համար՝ մյուս կողմից:

Սատրել ենրկայացնում ենք այդ չափանիշները՝ մեր մնակարակություններով և հիմնակնորությունով:

**Առաջին՝** գիտական-ակադեմիական չափանիշ: Արմենոցիդին և Հոլորուսին հաջորդած ժամանակաշրջանում, ինչպես նշել և ցույց են տվել Հեղին Յայեց, Բարբարա Հարթը և այլ ականավոր ցեղասպանագիտներ, կորուզ մեծացալ Եվրոպայում, Ասիայում, Աֆրիկայում և Հարավային Ամերիկայում իրագործված ցեղասպանությունների կամ դրանց փորձերի բնարանակը: Այդ հիմքի վրա ձևադրվեց և գիտական ասպարեզում հայտնվեց գիտական մի նոր ուղղություն՝ ցեղասպանություններ, որի շնորհիկ ցեղասպանության ուսումնասիրությունը ողբարսացրեցան որորտից տեղափոխվեց գիտական դաշտ՝ դառնարկ առանձնահատութեակ վկրուծության և ուսումնասիրության առարկա: Ավելաց առնելով XX դարի 20-ական թվականներից՝ հայոց ցեղասպանության ուսումնասիրությունից, հարատանարով երևական Հոլորուսի և դրանց հաջորդած այլ ցեղասպանությունների կյարքով, ցեղասպանագիտության աստիճանաբար մշակեց ու հստակեցրեց իր ուսումնասիրության առարկան, մերողաբանությունը, բացահայտեց ցեղասպանության պատմաներն ու քննությունը, նրա կանխման հնարավորությունները,

յուրաքանչյուր ցեղասպանություն դիտարկեց որպես հանցագործություն՝ ուղղված համայն մարդկության դեմ, և բարձրացրեց նրա ուժագործ հանցագործներին պատճեռ հարցը: Դա խթէին նորություն էր հասարակական և հումանիտար գիտությունների ոլորտում: Ըստին ցեղասպանագիտության՝ ցեղասպանությունը դադարեց լոկ տվյալ երկրի ներքին քաղաքականության հարց լինելոց և վերածվեց միջազգային ինքնունին:

Դատահականություն չէ, որ ցննարկումը սկսում ենք գիտական-ակադեմիական շափանիշից: Դա բացառորդում է նրանով, որ դռնա ՀՀ դարի կենսերին համոզմնություն ուժ առացավ և ամրող աշխարհում ընդունվելոց այն տեսակետոց, որ մեր դարաշրջանը գիտության տիրապետության դարաշրջան է: Այդ տեսակենուն ավելի ամրապնդվելոց հետուած տարիներին, մասնավայր ՀՀ դարի սկզբներին: Դրանից հետևում է, որ մեր օրերում բոլոր հարցերը պեսար է անցկացվելու գիտականության պրիզմայով և հաստատվեն կամ մերժվեն՝ եղնելով այդ մոտեցումից և նրա արդյունքներից:

